Աննա Դավթյան

Միշտ կերգվի

Ալենի հիշատակին,

որ չէր գրվել որպես հիշատակ:

Ինչ-որ բաներ փորձում են ստեղծել նրա գոյությունը: Կան միայն նրա փոքրիկ լույսիկները՝ կախված հայելիների վրա, փայտե փեղկերով լուսամուտին ու դարակի սպիտակ խոռոչներին: Մեկը խմած ճմլկոտում է բազմոցին՝ կլանելով լույսերը: Այսօր, թե երեկ արտակարգ դրություն է հայտարարվել, այնպես որ՝ դեռ կարելի էր խմել: Գնացել էին փաբ: Սիգարետի ծայրը Մարիամը վերցրեց սեղանից, դրեց մոխրամանի մեջ: Խմիչքը արագ կուլ տվեցին: Հենվեցին իրար վրա:

Ո՞վ է ասում, թե ուրիշի ձայն կար:

Ամբողջ ընթացքում մարտին էին սպասել: Ամիսը լցվել էր իրիկնային մոհիտոյի մեջ: Անծանոթ տղամարդիկ խմում էին ու աղմկում: Նրանք երեքով իրար էին նայում: Մեկը ձեռքերի մեջ պտտում էր մեքենայի բանալին: Ի վերջո գնալու էին լույսիկներով տունը, որտեղ ինչ-որ բանի էին սպասելու: Բաժակների մեջ մնացել էին դաղձի ճմռթված տերեւները՝ կպած սառույցներին: Կարմիր լույսը լցվել-մնացել էր բաժակներում: Ձողիկները բեկվել էին:

Երբ էլ դաշտերի միջով քշեր, մտածում էր սիրո մասին:

Եթե դուրս գային լաբիրինթոսից, որի մեջ էին, կկարողանային կողմնորոշվել, թե ինչ էին ուզում: Բայց հնչում էր երաժշտությունը: Անձրեւ, թե ձյուն էր մաղում: Մեկը գլուխը դրեց ուսին:

Իրականությունն այն է, որ սիրում էին իրար այդ պահին, գուցե դրանից առաջ՝ չէ:

Բայց դեպքերը շաղված էին գիտակցության մեջ, պարզ չէր: Հիշում է նրան հիմա հանդարտ, ջղաձգությունից զերծ, սովորական, պարզ հայացքով, աչքերով, որ նայում են: Երաժշտությունը ձգվում էր, բայց ինչ-որ բան չէր կայանում, նստած էին պարզապես երեքով, երեւի ուրախ էին: Մարիամը անհանգիստ էր արտակարգ դրությունից, մեղավոր էր զգում: Խոսեց հեռախոսով ու ասաց՝ հա, հա: Հետո հեռախոսն անջատեց, դրեց սեղանին, մոխրամանի կողքին:

Չգիտեր՝ ինչու էր նրան այդ մարտը խոստանում, մտքին ոչինչ չկար: Բայց կար խոստումը, հետեւաբար եւ սպասումը: Նա մուգ կապույտ գիշերազգեստ էր բերել, որ արդուկված, ծալված սպասում էր ճամպրուկում: Կտորը կոշտ էր, ասում էր, որ դրանով դիմավորել էր ուզում նախկին մի տղայի, որ տխրություն չուներ:

Հետո, երբ տանն էին արդեն, ու լույսիկները կային, հագավ գիշերազգեստը: Եկավ-նստեց բազմոցին, աչքերը երկար հառեց: Մարիամը նկարեց իր հեռախոսով:

Լուսամուտի հին սպիտակ փեղկերից դենը քաղաքն էր, որ տարածվում էր հենց պատուհանի տակ՝ փոշոտ փողոցի վրա: Ներս չէր խցկվում ու չէր խանգարում: Ամեն ինչ սպիտակ տան մեջ էր: Հետո, երբ նայեց նրա գիշերային շորերին, հասկացավ, որ նա բազմակի բաների է պատրաստ, այդ թվում եւ իր հետ: Չգիտեր, հստակ ոչինչ չէր ասում: Մատները անցած ուրիշի: Հետո նայեց նրա պարանոցին:

Պատին կախված հայելին, որից կախված էին լույսիկները, վեցանկյուն էր: Կամ էլ ավելի շատ անկյուններ ուներ, գուցե արեւի էր նման: Գալարվում էր բազմոցի վրա՝ գլուխը Մարիամի ծնկներին: Զգում էր, որ նա շոյում է: Առաստաղից

կախված ջահ չկար, սպիտակ տախտակներն էին՝ իրար զուգահեռ: Մաքուր տուն էր՝ համարյա երեւակայական: Այստեղ հազարոտնուկներ միշտ շատ էին լինում՝ չոր էր ու տաք: Ուզում էր նրանց պատմել, որ սիրում էր սիրածի եղբորը, ու նայում էր պատն հատող միջատին: Հավանաբար կանգնած էր հենակետում՝ աչքը դիտակից հառած դիմացի թշնամական լանջին:

Սկսեց պատկերացնել մարդկանց վերջույթների ամպուտացիան: Կանանց կտրված կրծքերը: Մատներ, ոտքեր, թեւեր՝ պլոկված ընդհանուր մարմնից: Դրանք վառո՞ւմ են, թե՞ թաղում: Ո՞վ է աշխատում վառարանի մոտ: Պարզապես վերցնեում է ձեռքը ու հետո նետո՞ւմ, թե՞ դնում է վառարանի մեջ: Երեւի ափսոսանք չկա աղճատման համար: Սոնան ասում էր, որ գոհ է կորոնայից, քանի որ մարդկանց մարմինը չի խեղում: Բայց մի բուժքույր պատմում էր, թե ոնց է մարդը դեռ խոսում հետդ, բայց արդեն թոքեր չունի: Նրա կուրծքը վերուվար է անում արհեստական սարքով: Հետո, ինչ-որ պահի սարքն անջատում են: Թոքերը հավանաբար կարեւոր են, դուրս է գալիս:

Պատկերացնում էր, որ սկզբից կտրում են կաշին, հինգ սանտիմետր պլոկում են մսից, բարձրացնում են վերեւ, որ տակից կտրեն թեւը, հետո մնացած ավել կաշին քաշում են իրար վրա ու կարում: Հավանաբար այդպես են անում, թե չէ կտրված թեւի վրա կերեւային բոլոր հյուսվածքները, ոսկորը: Ինչպես մսագործի կրպակի ճակատին նկարված դարս-դարս մսաշերտերով մարմնանդամը:

Երբ հազարոտնուկը թողնում է ոտքերից մեկը, էլի կարողանում է քայլել: Հետո մտածեց, որ չի կարողանա ապրել առանց նրա, եթե ամեն դեպքում ինչ-որ բան լինի: Սկսեց նրան նայել այդ ապագայի միջից՝ հետ դեպի այս պահը, որտեղ նա արդեն հարազատ է, որտեղ նրա վիզը կա, որտեղ նրա կապույտ գիշերազգեստը ցավ է պատճառում: Նայում է նրա հետեւից ու արտասվում: Որ հնարավոր է՝ դեռ գա:

Նրան միշտ ճայ է համարել՝ նրա աչքերի, քթի համար ու արձակ տարածություններում, աղի ծովի կամ քաղցր ջրերի վրա թռչելու կարողության: Կռնչում է ու գուցե ինչ-որ բան է պահանջում: Որը չի ձեւակերպում: Հատում է նավերի ճանապարհները: Հորիզոնի վրա հատվում է ջրի գիծը:

Մարիամը համարյա բան չի պատկերացնում, թպրտալով ծիծաղում է ու խոսում:

Տունը պտտվում է պառկածի վրա, մտքերից գլուխը ֆոռում է:

Կամաց խշշոց է լսվում: Երեւի միջատ է քայլում, որ թողել է ոտքերից մեկը: Ոտքը ինչ-որ տեղ ընկած դեռ ջղաձգվում է իր բարակ մարմնով:

Ժամանակի մեջ ոչինչ առաջ չի գնում: Նա էլի նստած է իր գիշերային համազգեստով՝ որպես մուգ կապույտ: Ձեռքերը մեծ են: Եղունգներն են մանր ու բարակ: Մտածեց, որ կուզեր՝ ձեռքերը այլ լինեին, չէ՝ եղունգները: Մտքերը չէին ժողովվում:

Ուզեց ասել նրան՝ արի ոչ մի բան չանենք, կարծես ինչ-որ բան նախատեսված լիներ: Երկու բանի արանքում էին երկուսն էլ, գուցե երեքն էլ: Ինչ-որ տեղ, խրամատների խանդակների մեջ կար նաեւ չորրորդը: Կրակում էր աջուձախ: Այդպես էին սովորեցնում: Ու հաց էր թխում՝ դաշտային խոհանոցի վառարանի մեջ սալյարկա լցնելով: Որին երբեմն կիսլատա, երբեմն սիլիտրա էր ասում: Սիրում էր արվեստը, դրանից խառնում էր բառերը: Դաշտային թուփուքարից չէր տարբերվում, այնտեղ անդեմ պետք է լինել: Բժշկի ձեռքերն են հարցը: Գեղեցիկ են դրանք, եթե կտրտել-կարել են:

Ընդհարապես բազմակիության զգացումը սիրում էր: Նա, ով գիշերանոցով էր: Ու սկսում էր թվալ, որ իրենք էլ բազմանում են, դառնում են ավելի շատ, դառնում են այն բոլորը, ում կարելի էր երազել: Թեւերն էր փռել մի անտես թռչուն, ու դողում էին թեւերը նրա:

Հեռու դաշտերի մեջ առաջանում էր գարունը: Առվի եզրին նունուֆար էր աճել: Այդտեղ եղել էր մեկի հետ, ում անունը չէր ուզում տալ: Հետո նա վեպի մեջ մտավ:

Վեր կացավ, բացեց սենյակի դուռը, մթության մեջ նայեց: Պատասխաններն այնտեղ չէին իհարկե: Գուցե չէր էլ փնտրո՞ւմ: Գուցե չէր մտածում, որ առիթը կար: Կարապի երգ, որ միշտ կերգվի, միշտ կերգվի:

Եթե Մարիամին տուն ուղարկեին ու մնային երկուսով, առավոտ էր գալու, ու պետք էր լինելու որոշումներ կայացնել: Պետք էր լինելու առաջանալ կյանքի միջով՝ ձեռք բերած նոր մտքեր ու թուլություն: Պետք էին լինելու նոր պաշտպանիչ եղանակներ: Վահաններ ու սաղավարտ: Տխուր պատկերի ասպետի այդ ջանքը: Մեջքի հետեւից ձեռքը տարավ նրա վերնազգեստի երկայնքով: Խզեց առավոտվա գալու միտքը:

Միշտ, միշտ կրկնել նույնը ու չհրաժարվել վերքից: Ներսի անմխիթար ծավալներ:

Պետք էր հայացքը հետ քաշել այդտեղից:

Մանկության հիշողությունների մեջ կար ամենից լավ տունը, որ երբեք չի կրկնվի: Միշտ ընկնում էր այնտեղ, երբ անգամ չէր ուզում: Պետք չէ այդ մասին մտածել, պետք չէ: Քանի որ վերացել է: Հիշելը քմահաճույք չէ: Տես, այստեղ մի ամբողջ քաղաք կա: Ու նա նստած սպասում է կողքիդ:

Գիտես, որ շատերին է սիրել, բայց նախեւառաջ՝ մորը:

Պե՞տք է արդյոք աչքերի մեջ նայել:

Բժշկի է գնացել, ծնոտը խախտվել էր:

Մարիամը պատմություններ է պատմում մեջքի հետեւում: Դրանք չեն ավարտվում: Ամեն մեկն իր պատմության հետ է: Դրսում գետնի վրա գիշեր է:

Շիշ է դրված պատուհանին, չորս մատ կարմիր հեղուկ կա մեջը: Դրեց հետ՝ տեղը:

Մնա՞ նրա հիշողություններում, թե՞ թողնի, որ նա էլ գնա խրամատներում կավ դառնալու: Փամփշտատուփս լիքն է, ասում էր չորրորդը: Դա շատ գեղեցիկ է:

Ունենալ կրակված գնդակներ գլխի մեջ:

Դրսում, ուռած բարդիների վրա կոնչում են ագռավները: Ճյուղերը սոսափ-սոսափ տարածվում են ուղիղ, վերեւ:

ապրիլ, 2020